

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐԱԿԱՆԱՑ<sup>(\*)</sup>

«Ազգուժմն հրաժեշտական ելանակին ... ընդոստոյցեալ զարեւոյցնե գծիս սմեհեցուն առ ի սենչումն սնորհին, Բանգի շիբ ինչ, որ զկուսս մեք յեղաբոյժ յուրախութիւն կամ ի ստուերին որպէս զեղբոյն ձայն յորժում որպէս պարուն է ի ինջիջ . վասն աշտարիկ եւ եկեղեցական աւանդութիւն ընկալաւ գայն յարեմոնց»:

ՆՆՐՈՒՄ ԼԱՄՐՐՈՆԱՑԻ, «Մեկնուրիւն Ս. Պատարագի»

### Յ Ո Ւ Ս Ձ Ա Ն Բ Ա Ն Ի Փ Ո Ւ Ս Ա Ր Է Ն

Ս. Էջմիածնի ձեմարանի մասնագիտական բաժնում սովորելու ժամանակ, իմ սրտին շատ մօտ զգացի ուսումնասիրելու մեր եկեղեցական հայրերի հոգեւոր երգերը, մանաւանդ որ Մայր Աթոռի հարուստ գրադարանում կային շատ ձեռագիր շարականներ, տաղարաններ եւ հոգեւոր երգարաններ: Այս ձեռագիր շարականները պէտք եղան համեմատելու տպագրուածի հետ, որոշելու համար զաստորութիւնը որի ժամանակ գտայ մի քանի շարականներ, որոնք կցուած են ուսումնասիրութեանս:

Ուսումնասիրութեանս նիւթ դարձրի մեր հոգեւոր երգերը, սյն յայտնի պատճառով, որ կրօնական-հոգեւոր երգերի մէջ կարելի է տեսնել ու ճանաչել հայ ժողովրդի հոգեւոր ըմբռնած վեհմտն ու զեղեցիկը, հայ ժողովրդի հոգին իւր կրօնական րոտը կարելիութիւնով եւ ուժով, կրօնական զգացմունքը երն իրենց այդպիսի սխալութեան սյն ձեւերովն ու թափովն, որ յատուկ է ժամանակակից ապրող մարդկանց աշխարհայցողութեան:

Մեր թոյլ ուժերով ձեռնարկեցինք այդ գծաւորին գործին, յուսալով միանգամայն, որ մի շատ փորրիկ ծառայութիւն մատուցած կը լինենք սրանով մեր եկեղեցական գրականութեան:

Վ. ԲԺՇԿՍԱՆ

1999 թ., Դեկտեմբեր 9 - Քարիզ

### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԿԱՍ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳ

«Վշտանայցէ ոք ի ձե՛նք, յողթոս կայցէ, բերկրեացէ ոք, սաղմոս ասացէ՛»<sup>(\*)</sup>: Յակովբոս առաքելոյ այս խօսքերը պարզ ցոյց են տալիս թէ քրիստոնէութեան պարզ կեցութեան մէջ քրիստոնէայ համայնքը այգթօքի ինչպիսի ձև կամ խօսքեր ունէր:

Քրիստոնէութիւնը Հրէաստանում ծնաւ, այստեղ սնաւ ու իւրժանկութիւնն այնտեղ անցաւ և առաքելներին ձեռքով

ախեղերքին աւետարանուեց: Անշուշտ առաջին քրիստոնէայ համայնքը դեռ Մովսիսական ձիւղից ու արարողութեանց նեա կապուած պիտի լինէր, և էր յիրաւի, վասնզի յետագայում մենք տեսնում ենք սրբազան առաքելոց Պետրոսի և Պողոսի մէջ տարածայնութիւնք Մովսիսական ձեւերը պահպանելու և չպահպանելու մասին<sup>(\*\*)</sup>:

Սակայն ինչպէս յիշուեցաւ, նոր

(\*) Հանդիմանով մամուլին կը յանձնենք տասնամեակներէ ի վեր Ս. Աթոռոյ Դիւանատան թղթածրարներուն մէջ հանգուց այս գնահատելի և իմաստալից ուսումնասիրութիւնը: Փոփոխութիւն էր որ լայն տեսներ գրքոյկի մը ձևին տակ, մատչելի ըլլալու համար մեր ընթերցող հասարակութեան լայնագոյն խաւերուն: Կատարած ենք լեզուական թերթի կարգաւորութիւնը:

ԽՄԲ.

(\*\*) Յակովբոս Թուղթ Կաթողիկեայց, Գլ. Ե., 13րդ համարը:  
(\*\*\*) Գործք Առաքելոց, ԺԵ. Գլուխ:

քրիստոնեայ համայնքը առաջին գարե-  
 բուսման հարկազանցողութեամբ հոգեւոր երգեր  
 շունենալով, պիտի գործածէր հինը, մա-  
 նաւանդ, որ նա չէր մերժում հինը: Ընթի-  
 մէջ ամենից ընտիրը, որ գործածական  
 էր և Մովսիսական ծիսից մէջ, Գուրթի  
 սաղմոսներն էին: Մաղմոսները սրտա-  
 բուզիս հոգեւոր երգեր էին, որ առաջին  
 քրիստոնեայ համայնքի պէտքերը կարող  
 էին լցունցանել:

Սաղմոս(արան), որ եբրայեցիներէն ե-  
 բրաժշտական մի գործիքի անունն էր,  
 անուանուեցան այն երգերը. որոնք կ'եր-  
 գըէին այդ գործիքի ընկերակցութեամբ  
 կամ ներդաշնակութեամբ:

Առջի քրիստոնեայ համայնքը առա-  
 լելութիւն ստուա այդ երգերին և զոր-  
 ծածոութեան մէջ պահեց շատ ժամանակ,  
 մինչև անգամ այն ժամանակ, երբ քրիս-  
 տոնէութիւնը անցաւ հեթանոսներին և  
 այն երկնային վարդապետութիւնը հեթա-  
 նոսաց սեպհականութիւն գործաւ, ընդ-  
 մէին սաղմոսները գործադրուեցան հե-  
 թանոս քրիստոնեայ համայնքի մէջ իբրև  
 հոգեւոր երգեր:

Քրիստոնէական Եկեղեցին ժամանակի  
 ընթացքում ազգային կամ ցեղական դա-  
 նազան հանգամանաց ներքոյ զարգացաւ:  
 Սաղմոսերգութիւնը թէև իւր տեղն եկե-  
 ղեցական երգեցողութեան մէջ չկորց-  
 բուց, բայց շատ քիչ սեղ գրաւեց, վասն  
 զի նրան կցուեցան սաղմոսանման երգեր,  
 յաճախ նոյն բովանդակութեամբ, կամ  
 սաղմոսի մի տուն իբրև բնարան դրուած  
 մի երգի և կամ երգը սաղմոսի սկզբ-  
 ուածքով:

Քրիստոնէութիւնը շատ ազգեր և ժո-  
 ղովուրդներ ընդունեցին, շատ ժողո-  
 վուրդներու սեպհականութիւն դարձաւ և  
 իւրաքանչիւրը իւր ազգային, տոնական  
 դրոշմը դրաւ այդ նոր կրօնի վրայ, թէ՛  
 նրա գաղափարների և թէ՛ ծիսական մասի  
 վրայ:

Գաղափարների վրայ արած ազդեցու-  
 թիւնը կարելի է տեսնել ազգային դաւա-  
 նաբանութեան ռեսուլյուսիոնութեան մէջ,  
 իսկ ծիսական մասի վրայ թողած ազդե-  
 ցութիւնը՝ Եկեղեցու ծիսական արարու-  
 ղական մասի ռեսուլյուսիոնութեան մէջ:

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ  
 ԿՐՈՆԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ**

Մասնաւորելով մեր խօսքը Հայաս-  
 տանեայց Ս. Եկեղեցւոյ շուրջ, անոր ծի-  
 սական մասը նոյն զարգացման է հն-  
 թարկուել, որը անխուսափելի է բոլոր  
 քրիստոնեայ ազգաց Եկեղեցիներու վե-  
 բարբրմամբ:

Քրիստոնէութիւնը, այդ աստուածա-  
 դիր կրօնը, Հայաստան մասնելով, շատ  
 շուտ ծաւալեցաւ, սակայն չկային այն-  
 պիտի պատրաստի անձինք, որք հայու  
 սղուով երգէին ու փառարանէին Արարչին:  
 Ուստի, քնակակարար և մեր Եկեղեցու  
 մէջ պիտի մտնէր պատրաստի երգերի —  
 սաղմոսների — գործածութիւնը, ինչպէս  
 որ մտած էր ուրիշ ազգաց — Ասորոց,  
 Յունաց ևլն. — Եկեղեցեաց մէջ:

Մեր Եկեղեցւոյ կրօնական քնարեր-  
 գութեան զարգացումն երեք աստիճանի  
 կարելի է վերածել:

Առաջին աստիճանը քրիստոնէութեան  
 սկզբնական ժամանակն է (Գ. — Ծ. Դարեր),  
 երբ զուտ սաղմոսներն էին գործածու-  
 թեան մէջ իբրև հոգեւոր երգեր, փառա-  
 բանութիւններ, օրհնութիւններ և խն-  
 դրբուածք, որք բոլորն էլ ամփոփուած  
 են Սաղմոսարանի մէջ:

Ծ. Դարու մեր մասենագիրներէն շատ  
 վկայութիւններ կարող ենք յուսով բերել,  
 որոնցից պարզ կ'երևայ, որ այդ ժամա-  
 նակ իսկ (Ծ. Դարում) սաղմոսերգութիւնը  
 մեծ տեղ կը գրուէր ընդ սրտ և կցորդք:

Ո՞ր շահեալք լի հոգեւոր օգտիւ ըն-  
 թանային խնդալիցք ի հաղորդմանէ մեծի  
 խորհրդոյն, արձակեալք իւրաքանչիւր  
 ի տունս իւր մեծամեծք և աղայք սաղ-  
 մոսելով և կցորդս ասելով\*<sup>8</sup>, ասուծ է  
 Ս. Սահակ իւր տեսիլը պատմած ժամանակ:

Թէ՛ ո՞րչափ քաջութիւն և եռակել կա-  
 բող էին ներշնչել սաղմոսների երգելը՝  
 այդ երևում է Աւարայրի ճակատամարտի  
 նախընթաց գիշերի նկարագրից. «Եւ ըզ-  
 ցայգն ամենայն դոստք քահանայից մե՛րթ

<sup>8</sup> Տե՛ս Ղազար Փաբպեցի, էջ 47, տաղ 13-  
 18, ապագրեալ Ս. Ղազար, Վենետիկ, 1873:

սաղմոսարանին գորղոյիւք, մե՛րթ վարդապետական բանիւք քաջալուրելին գրազմութիւն գորացնէ՛:

Սաղմոսելով նահատակուած է Սուրբ Յովսէփ վայոց - Զարեցին:

Իսկ երբ վահան Մաժիկանհանը պարտիկներին Հայաստանից իսպառ դուրս քշելով խաղաղութիւնը և անդարբութիւնը կրկին վերականգնուած է, Յովհան Մանդակունի կաթողիկոսը զաղմոսել է տալիս Աստծուն իւր ուրախութիւնն ու զոհութիւնը արտայայտելու համար: Ընկ որոյ կաթողիկոսին Հայոց Յովհաննու տեսեալ զանկարծելի աւեփաւորութիւն շնորհեալ յԱյ. ի ժամանակս երանելոյն, ըրկրիսալ ցնծալից սրտիւ՝ տայր ստիլմսիլ ի ժամուան՝: ԸՍաղմոսք էին նոցա մրժուելք երգոց, և ընՊերցուածք սուրբ գրոց կատարեալ ուրախութիւնք՝, պատմուած է Ոսկեմատեան Սղիշէն Եթնկերարդ Յեղանակին մէջ, երբ տակաւին շարունակուած էին խռովութիւնք ի Հայոց:

Այն կանայք, որոց այրերը զեղերուած էին Գարսիաստանի խորհրդ, միշտ սաղմոսուած էին. ԸՍաղմոսք էին մշտնջինաւորք՝ մրժուելք ի բերանս նոցա՝:

Սոյնպիսի օրինակներ բազմութիւ են մեր մասննպիրների մէջ. նոյնիսկ մեր ամենահին կարծուած շարականները սաղմոսներ են՝ որ կը տեսնենք իւր սեղում:

Երկրորդ աստիճանը մի անցումն է սաղմոսներից քաւիկ նոր հիւսուած երգերն, որք յիբուսի կցորդ անուան արժանի են, վասնզի սաղմոսների աներին կցուած էին երգչի բերնէն նոյն բովանդակութեամբ խօսքեր: Կլյոզը բառին, զոր Օրբէլեան և Կիրակոս Գանձակեցի զործ կը դնեն Սիւնեաց Ստեփանոս Եպիսկոպոսի վրայ խօսելիս, աւելի յարմար բազմարութիւն չի կորեւի յայ:

Իրթէ այժմ այս անցումը չի՛ նկատուիր: Այժմ էլ, մեր Եկեղեցւոյ համապաշտութեան միջոցին, մի քանի տուն սաղմոս կ'ասեն փոխէ փոխ, ապա կը սկսեն

Շարական երգել, անմիջապէս կցելով սաղմոսին, իսկ սաղմոսին մնացեալը լուսկ'ասուի (կը քաղուի) փոխասացնիւրէն:

Այս երկրորդ աստիճանը կը հասնի մինչև Է. և Ը. դարերն: Այս շրջանի երգերի մէջ մտցուած են սաղմոսից հատուածներ, կամ երգը կը սկսի սաղմոսի խօսքերով: Այս շրջանին կը պատկանին այլևս այնպիսի նոգեսոր երգեր, որոց բովանդակութիւնն Սուրբ Գրքից է աւելուած, օրինակ՝ Քրիստոսի Տնօրինութիւնը, և պատմուած կամ երգուած նոյն իսկ Սուրբ Գրքի բարբառով:

Երգեցողութեան այս ձևի անհրաժեշտութիւնն ու կարեւորութիւնն այն իրաւացի պատճառաբանութիւնէն յառաջ կը զայ, որ կ'անէին այն ժամանակ. այսինքն՝ տայ նորադորձ հայ-քրիստոսելին Սուրբ Գրքը նրան հասկանալի ձևով և ընդամին երաժշտութեան միջոցով զգացմուք զարթեցնել:

Օրինակ՝ Քրիստոսի հրաշափառ Սուրբ Մնուկը այսպէս կ'երգեն. — Անորնորդ մեծ և սքանչելի, որ յայժմ ուուր յայտնեցաւ, հովիւք երգեն ընդ հրեշտակս՝ տան աւետիս աշխարհի. Մնու նոր արքայ ի ինթղեւնէ՛մ քաղսքի, որդիք մարդկան օրնեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ Անբաւելին երկնի և երկրի. ի խանձութուր պտտեցաւ, ոչ մեկնելով ի Շօրէ, ի սուրբ յայրին բաղմեցուա՛ն:

Որքո՞ն պարզ, որքո՞ն անսեթեթ և հոգեբուզի են այս երգերը, որոնք մինչև այսօր պահպանել է Ս. Եկեղեցին: Նոյնպիսի է Արծաթախորութեամբ մոլեալ Յուդա, ըի գիշերի, յորում մասնիւր Տէրնա, քահանայաթողի շարականը կամ երգը:

Գտարաստ արարիք առաջի իմ զսեզան, ակն յանդիման նեղւոց իմոց: Օծեր իւզով զգլուխ իմ. բաժակ քո, որպէս անասակ արեցոյց զիսա:

Երրորդ աստիճանուած, հոգեւոր երգը (Ը. Դարից սկսած) ազգայնանում է (ազգային է դառնում), հիւսուած են զուտ վերացական գաղափարներով երգեր, ո-

1 Նոյն, էջ 204:  
2 Նոյն, էջ 647, տաղ 20 - 20:  
3 Սղիշէ, էջ 114, ապեալ Մոսկուա, 1892:  
4 Նոյն, էջ 180, տաղ 29:

\* Տե՛ս Շարական, էջ 23, ապեալ 1861, ի Ս. էջմիածին:

րոնց մէջ դիմում են բանին հորը, «ծնեալ որդուն» և զբխեալ հագունն: փառաբանում, օրհնում և զօգում, Հայց. Եկեղեցու ընդունած և գուանած սկզբաբունքը պաշտպանում: Սրունց օրհնակ կարող ենք առաջարկել Ս. Հոգւոյ գալուստեան տօնին երգելի շարականներէն Օրհնութիւնն ու Հարցը նոյն աւուր. —

«Երրորդութիւն անբաժանելի և զօրութիւն երկնային» և «ՉՀազուայ զգալուստեան տօնեմք, որ միթարեաց գառաքեալսն»<sup>1</sup>:

**ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՍԵՒՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Շարականների ծագման պատճառը կամ նպատակը պիտի չբանենք մեր պատմադիրների մէջ կամ այլուր, այլ պէտք է կարգանք դաննք ուսումնասիրական մտքով, և անմիջապէս կ'իմանանք թէ ինչու աւելցան սաղմոսերգութեան վերայ շարականները:

Նախ տաննք ինչ է որանց բովանդակութիւնը: Շարականների մէջ երգըւած են գլխաւորաբար Քրիստոսի անօրինութիւնները, Ծնունդը, Մկրտութիւնը, Թլփառումը, քառասորեայ գալուստն ի Տանար, կկաւորութիւնն ի Բեթանիա և յԵրուսաղէմ, Յարութիւնը, Համբարձումը, այլև սրբերի յօգուտ ընդհանուր Եկեղեցւոյ գործը կամ մարտիրոսացումը: Կարգալով այս բոլորը, մենք անսուսմ ենք պատմուած գէպքեր Քրիստոսի կեանքից՝ պարզ և հասկանալի ոճով, յաճախ նոյնիսկ Սուրբ Գրքի լեզուով. ուրիշն՝ նորա համար է, որ ժողովուրդը (իւր ժամանակի) երամշտութեան ժամանակութեամբ տպաւորէ իւր մտքում կրօնի ճշմարտութիւններն ու Եկեղեցու հաւատալիքները:

Շարականների մէջ, բացի նրանից, որ երգուած են Քրիստոսի անօրինութիւնները, կայ երգուած և Ս. Երրորդութեան երեք անձանց յարաբերութիւնը այնպէս, ինչպէս կը դաւանէ մեր Ս. Եկեղեցին:

**ՎԱՀԱՆ ԲԾԵԿՆԱՆ  
(Շարունակելի՛ 1)**

**ԳՐԱԻՍՍԱԿԱՆ**

**“ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ  
Ս Ի  
ԹՈՐՈՍ ՌՕՍԼԻՆ”**

Էկեղեցիկ՝ ՎԱԶԷ Մ. ՎՐԳ. ԻԳՆԱՏՈՍԱՆ

Յգ. Վեներիկ, Ս. Ղազար — 1983 — էջ՝ 67

Հատորիկ մը ևս, (և, կթէ չեմ սխալիք, հինգերորդը), Ս. Աթոռիս երիտասարդ ու բանիբուն Միտրանէն, լայս անսած գարձեալ Վենետիկի Ս. Ղազարու Տպարանէն, գեղատիպ կողքով և մաքուր ու հաշուաւոր տպագրութեամբ:

Չարմանալի, Թերևս, այս տողերը, գրուած մէկու մը կողմէ՝ որ մերժած է բանասիրական (մանրանկարչութիւնը խորթ չէ բանասիրութեան) կատորներու գոյութեան իրաւունքը իր գրագարանին մէջ: Որուն համար բանարուեստի բոլոր մարգերէն՝ ձեռագրական-հնագիտական կրթութեանը թուած են չոր ու անհրապոյր: Հայր Վաչէի այս անգամ՝ ձեռնած նիւթը, մասնագիտական իր բնոյթով և շնչաբէն օգտապաշտ նկարագրով, դարձուցած է իր քայլերը աւելի առոյգ ու ինքնավստահ: Շեշտ ու համարձակ է իր խօսքը և ոճը՝ առոյգ ու անմշուչ:

Ինչ որ որտաուս ըլլալու չափ ուշադրու է այս պարագային, Հայր Վաչէի սրտեսանդի նուերուսն է հանդիպ հայ գիրն ու գիրքը, երբ իրմէ աւելի տաղանդաւոր ու համալսարանաւարտ հոգևորականներ — վատն հեմ թէ Հայր Սուրբը, իր անյիշուարութեամբն ու սրտին անսահման բաբութեամբը ներողամիտ պիտի ըլլայ իմ այս հատաստեմին — յուճպէտս կը վատնեն իրենց կորովն ու սուղ մտմերը՝ իրենց հոգևոր առաքելութեան նպատակը ձեռնարկներէ իրենց այլուրութեամբը (կ'ապաւինիմ տա վերլիններուն ալ ներողամտութեան): Մէկ-երկու տարին անգամ՝ մը հրապարակ ինչեւ զբջոյկով մը՝ անարուեստ որքան պարարտ մեր ժամանակին ու պայերախ մեր մի-

<sup>1</sup> և ո՞ նոյն, էջ 381: